ՁԼ N 4

տ ե ղ ե կ ա ն ք

2015 թվականի գերակա խնդիրների եվ միջոցառումների
իրականացման արդյունքների

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	45.	«Մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հավանություն է տրվել ՀՀ կառավարության 2015 թ. հուլիսի 23-ի նիստի N 35 (8-րդ կետ) արձանագրային որոշումով:	
	46.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 21-ի N 539-Ն որոշումով:	

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	47.	«Տեղական տուրքերի և վճարների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Ներկայումս նախագիծը լրամշակման փուլում է՝ սահմանադրական փոփոխություններին համապատասխանեցնելու նպատակով:	
	48.	«Քաղաքացիական պաշտպանության ոլորտի կառավարման մարմինների միջև փոխգործողությունների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:	
	49.	«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:	
	50.	«Քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի մշակման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:	

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	51.	«Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների 5-րդ համաժողովի նախապատրաստման ու անցկացման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 12-ի N 1313-Ն որոշումով:	
	52.	«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Սահմանված ժամկետում ՀՀ կառավարություն են ներկայացվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ մի շարք այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին նախագծերը: Միաժամանակ առաջարկվել է օրենքների նախագծերի վերջնական տարբերակները ՀՀ կառավարություն ներկայացնել «Տեղական տուրքերի և վճարների հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման ընդունումից հետո:	
	53.	«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի 2016-2019 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:	

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	54.	«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի 2016-2019 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:	
	55.	«Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուի փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման միասնական կարգը հաստատելու և Հայաս-տանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ վարչապետի 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1/06.3/16673-15 հանձնարարականով ՀՀ կառավարության որոշման նախագծերը ներկայացնելու ժամկետ է սահմանվել «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներն ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:	
	56.	«Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը		

	57.	«Համայնքների խոշորացման պիլոտային փնջերում տեղական հանրաքվեներ նշանակելու, անցկացնելու և հանրաքվեների նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N N 269-Ն,270-Ն,271-Ն,272-Ն որոշումներով:	

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը	Կարծիք
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	22.	Վարչատարածքային բարեփոխումների իրականացման շարունակականության ապահովում	2015 թ. մայիսի 17-ին ՀՀ Լոռու մարզի Թումանյան, ՀՀ Սյունիքի մարզի Տաթև, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքային փնջերում անցկացվեցին տեղական հանրաքվեներ՝ փնջերում ընդգրկված համայնքների միավորման հարցով, որոնց արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ անհրաժեշտ է ապահովել համայնքների խոշորացման գործընթացի շարունակականությունը, մասնավորապես, մշակել համայնքների խոշորացման գործընթացի կիրարկումն ապահովող իրավական ակտերի նախագծեր: Այդ կապակցությամբ մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի	

			Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որը քննարկվել է ՀՀ կառավարության 2015 թ. սեպտեմբերի 25-ի նիստի ընթացքում: Օրենքների փաթեթը ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է 2015թ. նոյեմբերի 24-ին:	
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	23.	ՄԱԿ-ի միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի չափանիշներին համապատասխան որակավորում ունեցող 3 քաղաքային (Երևանում, ՀՀ Շիրակի և ՀՀ Սյունիքի մարզերում) որոնողափրկարարական թիմերի ձևավորում	Երևանի քաղաքային որոնողափրկարարական թիմը ս/թ սեպտեմբերի 1-4-ը անցկացված ՄԱԿ-ի միջազգային չափանիշներին համապատասխան արտաքին որակավորման քննությունը հաջողությամբ հանձնել և որակավորվել է որպես միջին քաղաքային որոնողափրկարարական թիմ, իսկ ՀՀ Շիրակի և ՀՀ Սյունիքի մարզերում ձևավորվել են որոնողափրկարարական թիմեր, որոնք նախատեսված են հանրապետական նշանակության արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար: ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1120-Ա հրամանով Շիրակի և Սյունիքի քաղաքային որոնողափրկարարական թիմերն անցկացրել են դաշտային վարժանքներ:	

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	24.	ՀՀ հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում (ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդի, Մովսեսի, Ազատամուտի և ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկի գյուղական համայնքներում) 4 կամավորական հրշեջ-փրկարարական հենակետերի հիմնում	2015թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ գործում են ՀՀ Տավուշի մարզի Արծվաբերդ և Մովսես համայնքների հրշեջ-փրկարարական հենակետերը, իսկ ՀՀ Տավուշի մարզի Ազատամուտ և ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքներում հրշեջ-փրկարարական հենակետերի վերանորոգման աշխատանքներն ավարտվել են: Ընթանում են հաստիքներով համալրման և ուսուցման կազմակերպման աշխատանքները: Մշակվել և ՀՀ ՏԿԱԻ նախարարի կողմից 07.04.2015թ. թիվ 274-Ա հրամանով հաստատվել է «Կամավոր հրշեջ-փրկարարների սկզբնական մասնագիտական պատրաստության ծրագիր»-ը: Մշակվել և ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչությանն է տրամադրվել Ազատամուտի հրշեջ փրկարարական հենակետի անձնակազմի հրշեջ-փրկարարական պատրաստության թեմատիկ պլանը:	
	25.	ՀՀ ՏԿԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ուսումնական բազայի և Փրկարար ծառայության Տավուշի ու Լոռու մարզային փրկարարական ստորաբաժանումների հրշեջ-փրկարարական տեխնիկայի և տեխնիկական զինվածության բարելավում՝ ժամանակակից գույքի տրամադրում	ՀՀ ՏԿԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ուսումնական բազայի տեխնիկական հագեցվածության բարելավման նպատակով՝ - ՃԿՊԱ-ի ուսումնական մասնաշենքում ստեղծվել է ՃԿԱԿ մոդելով տեխնիկապես հագեցած համալիր, որտեղ վերապատրաստում են անցնում ՃԿԿ աշխատակիցները. - • Լուսակերտ• ուսումնական բազայում օդային տարահանման գործնական պարապմունքներ անցկացնելու համար 13մ բարձրությամբ աշտարակի վրա տեղադրվել է ուղղաթիռ, ինչպես նաև պարանային և ալպինիստական աշխատանքների գործնական ուսուցման համար կառուցվել է 13մ բարձրությամբ 2 աշտարակ: 2015թ. ընթացքում ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչություններն	

			ապահովվել են փրկարարական հիդրավլիկ սարքերի հավաքածուներով: 2015 թվականի երկրորդ կիսամյակում Տավուշի և Լոռու քաղաքային որոնողափրկարարական թիմերը համալրվել են փրկարարական գույքով և սարքավորումներով, որը տրամադրվել է Շվեյցարիայի Զարգացման և համագործակցության գործակալության (SDC) կողմից: ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1095-Ա հրամանով Լոռու և Տավուշի մարզերի քաղաքային որոնողափրկարարական թիմերի հետ անցկացվել են տեխնիկական, ինչպես նաև վարժանքի կազմակերպման և անցկացման ղեկավար կազմի (DISTAFF) ուսուցում: ՀՀ ՏԿԱԻ նախարարի 2015 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1222-Ա հրամանով Լոռու և Տավուշի մարզերի քաղաքային որոնողափրկարարական թիմերի հետ ՀՀ ՏԿԱԻՆ ՃԿՊԱ-ում կազմակերպվել և անց են կացվել լեռնափրկարարական դասընթացներ: ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ մարզային ստորաբաժանումները հրշեջ տեխնիկայով, ամենագնաց մեքենաներով և անհրաժեշտ գույքով բարելավելու նպատակով մշակվել է «ՀՀ ՏԿԱԻՆ ՓԾ Սյունիքի, Լոռու, Շիրակի մարզային փրկարարական վարչությունների ստորաբաժանումներում հրշեջ սարքավորումների բարելավում» ծրագիրը և ներկայացվել Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությանը(JICA), որով նախատեսվում է համապատասխան գույքով համալրված թվով 39 հրշեջ տեխնիկայի ստացում:	